

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԵՐԵՔ ԾԱՆԿԱԳՐԻ ՎԵՐՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Գ. ԲԱԽԶԻՆՅԱՆ

Սայաթ-Նովան իր ինքնագիր երգարանը (դավթար) ավարտել է 1759 թ. Դրանով, սակայն, չի ավարտվել նրա ստեղծագործական ուղին։ Բնությունից շռայլորեն օժտված, հախուռն հույզերով ու խոհերով լի արվեստագետը շարունակել է ստեղծագործել անգամ քահանայի և ապա՝ կուսակրոնի սքեմ հաղ-նելուց հետո։ Ապացույց՝ երգչի որդու՝ Օհանի կազմած ժողովածուում և այլ աղբյուրներում պահպանված խաղերը¹։

Սույն հոգվածում ցանկանում ենք անդրադառնալ այդ խաղերից երեքին, որոնք գրված են 1792 թ.։ Խոսքը «Մըտա էշխի բուրեն», «Այբ աստված սիրիս» և «Այբըբիմըն կարթացիլ իմ դասեղաս» խաղերի մասին է։ Այս երեք խաղերը, որ պահպանվել են միայն Օհանի ձեռագրում, ունեն ոչ միայն նույն թվականը, այլև բավական մերձ են իրենց բնույթով։ Առաջինը (№ 49), ինչպես և ծանոթագրել է երգչի որդին, դառանքա է, այսինքն՝ աշուղական խաղի այն տեսակը, որի հանգավոր բառերը գրված են առանձին տառերի այբբենական անուններով։ Երկրորդը (№ 50) նույնպես դառանքա է, բայց ավելի բարդ տեսակի՝ այբբենական (ալիֆավա) դառանքա (ինչպես և ծանոցել է Օհանը)։ Այսինքն՝ խաղի տողերը (նաև կիսատողերը) սկսվում են այբուբենի հաջորդական տառերով (այբ-ից մինչև ֆեն)։ Մի քիչ տարբեր է երրորդը (№ 51), որը բարդ քեջնիս է. այն է՝ նույնանուն բառերով վերջացող ոտանավոր-բառախաղ։ Այս երեք խաղերի մեջ էլ ծածկագրեր կան։

Անդրադառնալով այդ խաղերին առանձին-առանձին և ավելի հանգամանորեն։ Սկսենք 50-րդ խաղից։ Ակնհայտ է, որ խաղը թերի է հասել մեղու Այն բաղկացած է եղել վեց տնից, բայց Օհանի ձեռագրում մնացել է չորսը, ընդ որում պակասում են չորրորդ և հինգերորդ տները, որոնք ընդգրկել են այբուբենի մե, յի, նու, շա, ո, շա, պե, ջե, ոա, սե, վեվ, տյուն տառերը։ Պակասող հինգերորդ տունը, հավանաբար, ավարտվել է «Տյուն ու Այիբ Թո» ձևով, որը կազմում է տաք բառը (թուրքերեն նշանակում է համ, հալակ), իսկ չորրորդ պակասող տունը, հավանաբար, ավարտվել է «Չա ու Այիբ Թո» ձևով, որ կազմում է արաբական ծագումով շաք բառը (թուրքերեն նշանակում

¹ Այլ աղբյուրներից մեկ հայտնի են Սայաթ-Նովայի շուրջ երկու տասնյակ հայերեն և նույնրան աղբյուրներին խաղեր։ Եթե ընդունենք, որ դրանց մի մասը ժամանակին գտնվել է երգչի ինքնաձեռագրում, ապա մի ղգալի մասն էլ պիտի հորինված համարել 1759 թ. հետո։ Ընդ որում հայերեն 67-րդ և վրացերեն 32-րդ խաղերը գրված են երգչի կրոնախորության տարիներին (տե՛ս Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, աղբյուրներին խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաբյան, Երևան, 1963, էջ 89, տող 10, էջ 129, տող 20)։

² Նույն տեղում, էջ 66—68։ Այս խաղերն առաջին անգամ հրատարակել է Գևորգ Ասատուրը «Աղագորական հանդեսում» (գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 109—110)։

է լալն նախապահ)՝ Մ. Հասարթյանը ևս գտնելով, որ խաղից Երկու տուն պակասում է, հենթադրել է, թե այդ տներն ավարտվել են միայն և զարհանդ փակող բառերով՝ Սակայն զ տառն առաջին տան մեջ արդեն ընդգրկվել է (Ձա զալում մարթու), իսկ մ-ն ընդգրկվել է շորրորդ պակասող տան հենց սկզբում, ուստի դրանցով Երգիչը չէր կարող հանդ կաղմող բառեր հողել, այլապես կշեղվեր այբբենական դարանեջալի չկգբունքից։

Խաղի վերջին տան նախավերջին տողում հեղինակն ավարտել է բոլոր տառերի թվարկումը («Եվ 0 ֆեն կարթալու աստված ճար ունի») և խաղն ամփոփել հետևյալ տողով. «Հալալ Սայաթ-Նովուն՝ Կեն ու Ալիբ Թո»։

«Կեն ու Ալիբ Թո»-ն կազմում է կար բառը։ Ուստի այդ տողը հասկացվում է՝ հալալ լինի Սայաթ-Նովին իր կերած կաթը։ Սակայն «Կեն ու Ալիբ Թո»-ն կար բառը կաղմկուց բացի նաև ծածկագրի արժեք ունի, որ մինչև այժմ չեն նկատել սայաթնովագետները։ Այն հաղորդում է Երգչի տարիքը՝ խաղի գրության ժամանակ։ Կենը հայոց այբուբենում ունի 60 թվային արժեքը, այսինքն՝ 1, թո՛ւ՝ 9, հետևաբար՝ $60 + 1 + 9 = 70$ ։ Ստացվում է, որ այս խաղը երգիչը գրել է յոթանասուն տարեկան հասակում, 1792 թ. ($1722 + 70 = 1792$)⁵։

Ուշադրավ է, որ այս խաղի մեջ ծե տառից սկսած Երգիչը հաղորդում է նաև որոշ ինքնակենսագրական տեղեկություններ։ Այսպես.

Ժե ժամանակ հասավ աչկերիս լալու.
Ին ինձի գրցեցիր դարդրս վուխալալու.
Լլուն լալով իմ յիս աշխարիս մընալու...
Ծա ծովումըն մընաց, դուս չեկավ նավըտ.
Կեն կամով ավելցրար սըրտի ցավըտ...

Այսինքն՝ տառ տարեկանում վիշտ է տեսել ու արտասվել, քսան տարեկանում սիրահարվել է և սիրուհու պատճառով սկսել է ողբալ իր ցավը (սիրո ցավը ողբալ աշուղությունը)⁶, Երեսուն տարեկանում համոզվել է, որ այլևս ընդմիշտ դատապարտված է լալու (աշուղություն), հիսուն տարեկանում հասկացել է, որ դուր է եղել ամեն ինչ, երազանքի նավը մնացել է ծովում, իսկ վաթսուն տարեկանում ինքնակամ ավելացրել է իր սրտի ցավը (զժվար է ասել, թե ինչ է ակնաբերում)։

Հատկանշական է, որ բերված տողերը գրված են անցյալ ժամանակով, մինչդեռ հաջորդ տողը, որտեղ խոսում է իր 70-ամյա տարիքի մասին, գրված է ներկա ժամանակով. «Հո համան կանչում իս Ձա ձայնով դավրտ»։ Այսինքն՝ յոթանասուն տարեկան հասակում անվերջ բարձրաձայն բողոք է կանչում։

3 Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն, Հայերեն բացատրական բառարան, հատ. Դ, էջ 7, 2 ր. Ա ճ ա ո չ ա ն, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 874։

4 Ս ա յ ա թ - Ն ո վ ա, էջ 67-ի ծան.

5 Սայաթ-Նովան ունի նաև մի թուրքերեն դարանեջա խաղ, որի վերջին տողում ևս, այս անգամ արաբական այբուբենի տառանունների միջոցով հայտնել է իր տարիքը (վերձանությունը տե՛ս Պ. Ս ե ա կ, Սայաթ-Նովա, Երևան, 1969, էջ 33—36)։

6 Այս առթիվ տե՛ս Պ. Ս ե ա կ, Սայաթ-Նովա, էջ 79—80։

Խաղի վերջին տան մեջ, ինչպես ցույց է տվել Մ. Հասրաթյանը⁷, երգիչը խոսում է հայոց ալբերկների որոշ տառերի կիրառության մասին:

Նույն 1792 թ. է գրված նաև 51-րդ խաղը, որի ծածկադիրն ավելի բարդ է, Խաղի երկրորդ տողում երգիչը հայկական ալբերկների տառերով հաղորդում է նրա գրության թվականը. «Հասա Ռա է, հասա Ջե, հասա Սե»:

Որոշ բանասերներ փորձել են վերծանել այս ծածկադրված թվականը: Վերծանման հիմք է ծառայել խաղի նախավերջին տողը. «Սայաթ-Նովա, տարիտ էլավ Բաբաուն»:

Այս տողի հիման վրա կարծելով, որ Սայաթ-Նովան խաղը գրել է քառասուն տարեկան հասակում (Բաբաուն-ը թեթևաբան հանգ կազմող բառերից է), վերծանողները երգչի ծննդյան իրենց ընդունած թվականին գումարեց են քառասուն և ստացել խաղի գրության թվականը: Մ. Հասրաթյանն, ընդհակառակը, այս ծածկադրի վերծանմամբ փորձել է գտնել Սայաթ-Նովայի ծննդյան ստույգ թվականը: Նա, հիմք ընդունելով երգչի ծննդյան մոտավոր տարիները, ինչպես և գտնելով, որ տողում մի վանկ պակաս է, առաջարկեց է այդ տողը կարդալ այսպես. «Հասա Ռա է, հասա Ջա ծա, հասասե»⁸:

Այսպիսով, ստանալով 1757 թ., նա դրանից հանել է քառասունը և ստացել 1717, որը և համարել է երգչի ծննդյան տարին:

«Սայաթ-Նովա» մենագրության մեջ Պարույր Սևակը, մերժելով Մ. Հասրաթյանի վերծանության եղանակն ու արդյունքը և ընդունելով, որ ծածկադրավոր տողում մի վանկ պակաս է, բնագրի ՌԷՋՍ-ն առաջարկել է կարդալ ՌԵՃԿՋ, որ տալիս է 1171 թ.: Այդ թիվը հաշվելով հայոց տոմարով, նա ստացել է երգչի ծննդյան իր պաշտպանած թվականը՝ 1722 (1171+551)⁹: Այս թվականի ճշտությունը ապացուցող այնքան համոզիչ փաստարկներ է բերել Պ. Սևակը, որ ավելորդ էր վերոհիշյալ ծածկադրի նման փոփոխմամբ կարդալ Սայաթ-Նովայի ծննդյան թվականը: Եվ հետո, տվյալ ծածկադրի մեջ երգիչն իր ծննդյան, թե՛ խաղի գրության թվականն է հաղորդել: «Հասա Ռա է, Խասա Ջե, Խասա Սե» տողն ակնհայտորեն թելադրում է, որ ծածկադրված թվականը վերաբերում է խաղի գրության ժամանակին: Նույնն է ասում նաև Մ. Հասրաթյանը. «Կասկածից վեր է, որ այս երկրորդ տողում երգիչը տվել է այն տարեթիվը, երբ գրվել է այս խաղը»¹⁰:

Նախ պետք է ասել, որ ծածկադրավոր տողը, չնայած մեկ վանկով պակաս է մյուսներից, պահպանվել է անաղարտ ձևով: Բսկ եթե այնուամենայնիվ մեկ վանկ պակաս է, ապա այն պակասում է ընդհանուր տողից և ոչ թե ծածկադրից (թերևս եղել է՝ «Հասա Ռա է, հասա Ջե ու հասա Սե»): Բայց մի՞թե Սայաթ-Նովան չունի այնպիսի խաղեր, որտեղ վանկերն անհավասար քանակով են: Հիշենք միայն հայերեն 14 և 15-րդ խաղերը (պահպանված հե-

7 Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի հայերեն մի բանի խաղերի մասին, «Տեղեկագիր» ԳԱ հայկական ֆիլիալի, 1943, № 3, էջ 38—39:

8 «Տեղեկագիր», էջ 42:

9 Պ. Սևակ, Սայաթ-Նովա, էջ 73—77: Մենագրության մեջ Պ. Սևակը մերժել է այս ծածկադրի վերծանության որիշ փորձերը, ուստի մենք ավելորդ ենք համարում անդրադառնալ այդ վերծանումներին ևս:

10 «Տեղեկագիր», էջ 41—42:

ղինակի ինքնաձևոագրում), որոնք տաղաչափական զգալի խախտումներ ունեն¹¹:

Վերծանման բանալին տալիս է ինքը՝ հեղինակը նույն այդ խաղի մեջ, որ անուշադրության ևն մատենել մյուս վերծանողները: Ընդ որում տրված է մի բանի բանալի: Կարդանք խաղի հենց առաջին տողը, որ ծածկագրի առաջին բանալին է. «Այբբբբմըն կարթացիլ իմ դասեղաս»:

Այսինքն՝ այբուբենը կարդացել եմ դասեղաս: 'Իասեղաս նշանակում է՝ շարքերով, դասերով, սյուն առ սյուն: Այդպիսի դասդասում կատարում են տառերի թվային արժեքները ըստ միավորների, տասնավորների, հարյուրավորների ու հազարավորների որոշելու համար: Կարդանք այբուբենը դասեղաս.

Ա	Ժ	Ճ	Թ
Բ	Ի	Լ	Ս
Գ	Լ	Յ	Վ
Դ	Խ	Ն	Տ
Ե	Ս	Շ	Ր
Զ	Կ	Ո	Յ
Է	Հ	Ձ	Ի
Ը	Ձ	Պ	Փ
Թ	Ղ	Ջ	Ք

Ստացվում է, ուրեմն, շորս սյուն: Ուշագրավ է, որ վերջին տան առաջին տողում, որ նույնպես բանալիի արժեք ունի, երգիչն ասում է. «Հազար տարին մարթու աչկին քարասուն»:

Սա կարելի է հասկանալ երկու իմաստով. ա) հազար տարին մարդու աչքին հաղիվ քառասուն տարի է երևում և բ) հազար տարին (1-ից մինչև 1000, կամ Ա-ից մինչև Թ) երևում է շորս սյունով (քառա սուն): Ուրեմն, այբուբենը պետք է կարդալ քառասյուն դասով, շորս սյունակով, ինչպես և վերելվում կարդացինք:

Այժմ կարդանք խաղի երկրորդ տան առաջին տողը, որ ծածկագրի մյուս կարևոր բանալին է. «Հազար տարին մարթու աչկին թաքավոր»:

Այս տողը ևս կարելի է հասկանալ երկու իմաստով. ա) հազար տարին մարդու աչքին մեկ օր (քաֆ ավոր) է երևում և բ) հազար տարին (կամ Ա-ից մինչև Թ) տե՛ս որպես քաֆավոր (քաֆավոր), այսինքն՝ միավոր¹²: Հենց այս է բանալին: Այբուբենը կարդալով քառասյուն դասերով, երգիչը դասերի մեջ ընդգրկված տառերը հաջորդաբար հաշվել է միավորներով: Այսինքն՝ Թ-ն ոչ թե հազար է, այլ՝ մեկ, որպես շարքի առաջին տառ, Ս-ն՝ երկու, Վ-ն՝ երեք և այլն: Նույնը նաև մյուս դասերում: Այժմ այբուբենը կարդանք քառասյուն դասերով և միավորների արժեքով, որը և կլինի ծածկագրի վերջնական բանալին.

11 Տե՛ս Ս ա չ ա թ - ն ո վ ա, էջ 26—27:
12 Ստացվում է, որ այս խաղում թե՛ իսային հանգեր կազմող քաֆավոր և ֆաֆասուն քառերը, որ երգիչը զործածել է երեքական անգամ, ունեն ոչ թե երեք, այլ շորս տարրեր իմաստներ, Թաֆավոր՝ ա) մեկ օր (թաք ավոր), բ) միավոր (թաքավոր), գ) թե որ դա (թա գավոր) և դ) թաղավոր: Փաֆասուն՝ ա) քառասուն, բ) քառասյուն (քառա սուն), գ) քարի նման խոսող (քարասուն) և դ) քարե սյուն (քարա սուն):

1 Ա	1 Ժ	1 Ճ	1 Ռ
2 Բ	2 Ի	2 Մ	2 Ս
3 Գ	3 Լ	3 Յ	3 Վ
4 Դ	4 Խ	4 Ն	4 Տ
5 Ի	5 Ծ	5 Շ	5 Ր
6 Ձ	6 Կ	6 Ո	6 Ց
7 Է	7 շ	7 Չ	7 Ի
8 Ը	8 Չ	8 Պ	8 Փ
9 Թ	9 Ղ	9 Զ	9 Բ

Այս բանալիով կարդանք ծածկագիրը՝ ՌէՁՍ. Ռ=1, է=7, Ձ=9, Ս=2. Թվերը դնենք տառերի տեղը և նրանց համադրությամբ կստանանք 1792 թվականը: Այս թվականին է գրվել, ահա, ինչպես նախորդ, այնպես էլ այս խաղը, երբ երգիչը բոլորել էր իր յոթանասուն տարին: Սակայն ինչպե՞ս համատեղել այս նախալերջին տողի հետ. «Սայաթ-Նովա, տարիտ էլավ քարասուն»:

Այս տողն, ինչպես նշեցինք, բացատրել են՝ Սայաթ-Նովա, տարիքդ դարձավ քառասուն: Առաջին հայացքից անառարկելի թվացող այս բացատրությունը համոզիչ չէ: Այլապես անհասկանալի է դառնում այս անգամ հաջորդ և վերջին տողը. «Դուն մահի հիդ, մահը քիզ հիդ հասասե»: Այն է՝ ինքը մահի հետ (կամ ևտեից) մահն էլ իր հետ հասվեհաս է:

Յոթանասուներեք տարի ասրած մարդը ինչո՞ւ և ինչպե՞ս կարող էր քառասուն տարեկան հասակում իրեն մահվան դուռը հասած համարել: Բնչբան էլ ուզում է ողբերգական վիճակի (խաթայի) մեջ ընկած լինել, ինչպես բացատրել է Պ. Սևակը, նա չէր կարող դրել այսպիսի տողեր.

Մահը վուր կա, առանց կաշաք հասասե... (հասաս է)
Ո՞վ է մնացի աշխարումըս քարասուն... (քար ասուն)
Դուն մահի հիդ, մահը քիզ հիդ հասասե: (հաս-հաս է)

Մի՞թե պարզ չէ, որ սա կյանքն ասրած և մահվան հետ զրուցող բանաստեղծի խոսք է: Ուրեմն ինչպե՞ս հասկանալ «Սայաթ-Նովա, տարիտ էլավ քարասուն» տողը: Մեր համոզմամբ Բաբայանը-ը այստեղ ոչ թե նշանակում է քառասուն, այլ՝ Բաբա սուն. այսինքն՝ քարե սյուն, շիրիմ, տապան իմաստով: Սա ներդաշնակում է հաջորդող տողին («Դուն մահի հիդ, մահը քիզ հիդ հասասե»): Ըստ այդմ, այդ երկու տողը պետք է հասկանալ՝ Սայաթ-Նովա, տարիքդ անցել, հասել ես շիրիմին, և դու մահի հետ, մահն էլ քեզ հետ հասվեհաս է: Քառասունը երեք-չորս անգամ տարբեր իմաստներով գործածելու համար երգիչը հեշտությամբ կարող էր շիրմաքարը Բաբե սյուն (Բաբա սուն) ձևով գրել, ինչպես որ նույն այդ խաղի մեջ զովագալ-ի փոխարեն գրել է ծովագալ (թեջնիսի պահանջով): Եվ հետո, ինչպես տեսանք, այդ տան առաջին տողում Բաբասունը-ը արդեն գործածվել է Բաբասուն իմաստով («Հազար տարին մարթու աշկին Բաբասուն»): Ի դեպ, հենց այդ տողի Բաբասուն-ն է Մ. Հասրաթյանը կարդացել Բաբա սուն (քարե սյուն), որ համոզիչ չէ: Մեզ գոնե չի համոզում «Հազար տարին մարդու աչքին թվում է մի հուշարձան-մոնումենտ (քարե սյուն)» բացատրությունը¹³:

¹³ «Տեղեկագիր», էջ 36:

Եվ այսպես, ինչպես 50-րդ խաղը, այնպես էլ 51-րդը երգիչը գրել է 1792 թ., յոթանասուն տարեկան հասակում, իր եղերական մահից երեք տարի առաջ: Եվ եթե առաջինի ծածկագրի մեջ նա հայտնել է իր տարիքը ($ԿԱԹ=70$), ապա երկրորդում՝ գրության թվականը ($ՌԷՋՍ=1792$): Եվ եթե առաջինի համար որպես կռվան ծառայում է «Հո (70) համան կանչում իս Զա ձայնով դավլտ» տողը, ապա երկրորդի կռվանը վերջին երկու տողն է.

Սայաթ-նովա, տարիտ էլավ քարասուն (քարե սյուն).

Դուն մահի հիդ, մահը քիդ հիդ հասասե (հաս-հաս է):

Ավելի բարդ ծածկագիր ունի 49-րդ խաղը, որը, մեր կարծիքով, նույնպես գրված է 1792 թ.: Բերենք միայն այդ խաղի ծածկագիրը բովանդակող տողերը.

Սիրտըս էլավ Քե ու Այիբ էրկու Բեն.

էլ ում բըռնիմ Սե ու Այիբ էրկու Բեն.

Մարթ վուր ըլի նու ու Այիբ էրկու Բեն.

էրկու աչկես էրկու Այիբ, էրկու Բեն:

Այս տողերում նշված այբուբենի տառանունները ոչ միայն կազմում են ֆարար, սարար, նարար և ար-ար բառերը, այլև ունեն ծածկագրի նշանակություն: Այս ծածկագիրը ևս աննկատ է մնացել բանասերների կողմից:

Այժմ բերված տողերից դուրս հանենք բառերը և թողնենք տառանուններն ու նրանց կից «էրկու» թվականները: Կունենանք հետևյալ պատկերը.

Քե Այիբ էրկու Բեն,
Սե Այիբ էրկու Բեն,
նու Այիբ էրկու Բեն,
էրկու Այիբ, էրկու Բեն:

Օգտագործելով նախորդ խաղի ծածկագրի վերը բերված բանալին, այս տառերի փոխարեն դնենք իրենց թվային համարժեքները ($Քե=9$, $Սե=2$, $նու=4$, $Այբ=1$, $Բեն=2$): Այս անգամ ստացվում է այսպիսի պատկեր.

9 1+22
2 1+22
4 1+22
2 1+22

«էրկու Բեն»-ի թվային արժեքների համադրումից են ստացվել վերը բերված 22-ները ($երկու=2$, $բեն=2$): Իսկ այբ-երի արժեքները գումարվել են 22-ներին, քանի որ ծածկագրում նրանք ու շաղկապով զատված են թվերից և միացած՝ հաջորդ թվերին («Քե ու Այիբ էրկու Բեն»):

Այժմ իրար գումարենք առաջին սյունակի թվերն առանձին, երկրորդինը՝ առանձին՝ $9+2+4+2=17$ և $23+23+23+23=92$: Երկու սյունակների գումարման արդյունքների համադրումը տալիս է խաղի գրության թվականը՝ 1792:

Այսպիսի բարդ հաշվումներն ու մտքի մարզանքները բնորոշ են մրցավեճերի ելնող աշուղներին և հատկապես Սայաթ-Նովային, որի ճկուն միտքը արտահայտություն է դառնում ոչ միայն ծածկագրերում, այլև ոչ պակաս բարդ քննիչ ու դատահեշտ և այլ զժվարակառույց խաղաձևերում, ինչպես և տոմարական խրթին հաշվարկներում, որ առկա են Կախի ավանում ընդօրինակած նրա ձեռագրի մեջ: Այդ հաշվարկներին ծանոթ մեկի համար բնավ դարմանալի չի թվա վերը բերված ծածկագրերի նման կազմությունն ու լուծումը:

Այսպիսով, եթե ընդունենք, որ մեր քննած երեք ծածկագրավոր խաղերը իրոք գրված-հորինված են 1792 թ. ընթացքում, ապա պետք է ընդունել նաև, որ Սայաթ-Նովայի ստեղծագործական կյանքը, ընդհանուր առմամբ, տևել է հինգ տասնամյակից ոչ պակաս՝ սկսած XVIII դարի 40-ական թթ. սկզբից մինչև նույն դարի 90-ական թթ. սկիզբը: Եթե հաշվի առնենք նաև այն հանդամանքը, որ նման խաղերը, սովորաբար, հորինվել են աշուղական մրցավեճերին դործի զրվելու համար, ապա պետք է ենթադրենք, որ կրոնավորության տարիներին էլ Սայաթ-Նովա-Մտեփանոսը երբեմն-երբեմն (բացահայտ կամ ծպտված) շարունակել է մասնակցել Թբիլիսիում հաճախակի տեղի ունեցող աշուղական բաս-մրցավեճերին, մի բան, որ հաստատվում է համապատասխան ժողովրդական ավանդություններով¹⁴:

РАСШИФРОВКА ТРЕХ КРИПТОГРАММ СЯТ-НОВЫ

Г. Г. БАХЧИНЯН

(Резюме)

Согласно распространенному мнению, Саят-Нова после 1759 г. не писал стихов. Однако расшифровка трех армянских стихотворных криптограмм поэта показывает, что все они написаны в 1792 г., когда автору было 70 лет. Эти стихотворения находятся в рукописном сборнике (давтаре) сына Саят-Новы Огана и опубликованы М. Асратяном. Две криптограммы остались незамеченными филологами, а третья, по нашему мнению, была расшифрована неверно. Наша расшифровка криптограмм показывает, что творческая деятельность Саят-Новы не прерывалась до конца его жизни.

¹⁴ Տե՛ս Սայաթ-Նովա, էջ XXXV, «Զովիտ», 1913, № 13, էջ 198—199, № 14, էջ 214—215: